ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ԼՂՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

03.02.2014 08:52

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը 2014թ. փետրվարի 1-ին, հյուրընկալել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարար Արարատ Դանիելյանին:

Հանդիպման ընթացքում կողմերը վերահաստատել են այն բոլոր ծրագրերը, որոնք քննարկվել էին Արա Ջոհրաբյանի գլխավորած պատվիրակության Լեռնային Ղարաբաղ կատարած այցի ընթացքում:

ԼՂՀ արդարադատության նախարար Արարատ Դանիելյանը կարևորել է ԼՂՀ փաստաբանության զարգացման գործընթացում ՀՀ փաստաբանների պալատի օժանդակությունը:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը տեղեկացրել է, որ գարնանը հնարավորություն կընձեռվի ԼՂՀ փաստաբանների պալատի փաստաբաններին մասնակցել ՀՀ փաստաբանների պալատի կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին՝ հեռավար կարգով:

ԼՂՀ արդարադատության նախարարը տեղեկացրել է, որ ԼՂՀ փաստաբանների պալատին նոր շենքային պայմաններով ապահովելու հարցը դրված է իրենց օրակարգում:

Կողմերը վերահաստատել են ՀՀ փաստաբանների պալատի նախաձեռնությունը ԼՂՀ պաշտպանության բանակի զորամասերում ծառայության անցնող զինվորների իրավագիտակցությունը բարձրացնելու նպատակով սեմինարներ իրականացնելու ծրագիրը, որը կմեկնարկվի գարնանը:

Առաջիկայում կքննարկվեն նաև ԼՂՀ իրավաբանների ՀՀ փաստաբանական դպրոց հիմնադրամ ընդունելության հարցերը, որոնք նույնպես կիրականացվեն հեռավար կարգով:

Առաջարկվող նորություններ

25.10.2013ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻԼԴԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

16.10.2013ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԵՏ

06.11.2013 ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

07.11.2013ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՄԵԿՆԻ ԱՐՑԱԽ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })